**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/9 ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի «ք. Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

15.06.2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ Գ. Գևորգյան
Լ. Մելիքյան
Ա. Աչոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Կ. Հարությունյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին**

---

(Ա. Զոհրաբյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ առողջապահության և ՀՀ պաշտպանության նախարարություններից գրություններ չեն ստացվել, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ ԿԳՄՍ նախարարություններից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեից, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացված պատասխան գրությունների արդյունքներով հրավերի պահանջներին չհամապատասխանող տվյալներ առկա չեն:

1.2 Գնման ընթացակարգի մասնակիցներ՝ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյան, «Գոհարիկ» ՍՊԸ կոնսորցիումի, «ԱՐՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ և «ՄԱՍԻՍ» ՍՊԸ կոնսորցիումի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**<u>Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյան, «Գոհարիկ» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- Հայտով չի ներկայացվել համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիրը:
- Ըստ հրավերի պահանջի՝ պետք է ներկայացվի պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն երկու պայմանագրի պատճեններն իրենց ավարտական ակտերով: Հայտով ներկայացվել է միայն մեկ պայմանագիր, որն էլ չի համապատասխանում հրավերի նմանատիպ պայմանագիր լինելու պահանջին: Ըստ հրավերի պահանջի՝ համանման (նմանատիպ) պայմանագիր է համարվում արդյունաբերական և քաղաքացիական նշանակության բարձր ռիսկայնության աստիճանի (4-րդ կատեգորիա) դասակարգում ունեցող օբյեկտների **կառուցման կամ վերակառուցման** աշխատանքների իրականացման նպատակով կնքված և ավարտված պայմանագիրը:
- Հավելվածներ N 1.2 և N 1.3 ներկայացվել են առանձին առանձին, սակայն համաձայն դիմումի Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանն ու «Գոհարիկ» ՍՊԸ-ն հանդես են գալիս համատեղ գործունեությամբ (կոնսորցիումով):

**<u>«ԱՐՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ և «ՄԱՍԻՍ» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- Ըստ հրավերի պահանջի՝ համանման (նմանատիպ) պայմանագիր է համարվում արդյունաբերական և քաղաքացիական նշանակության բարձր ռիսկայնության աստիճանի (4-րդ կատեգորիա) դասակարգում ունեցող օբյեկտների **կառուցման կամ վերակառուցման** աշխատանքների իրականացման նպատակով կնքված և ավարտված պայմանագիրը: Հայտով

ներկայացված ԿՄՆՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/3 պայմանագրի ռիսկայնության աստիճանը ըստ ներկայացրած փաստաթղթերի հնարավոր չէ գնահատել: Նշված պայմանագիրը գնահատելու համար անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյան, «Գոհարիկ» ՍՊԸ կոնսորցիումին, «ԱՐՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ և «ՄԱՍԻՍ» ՍՊԸ կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 16.06.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/9 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Ջոհրաբյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 17.06.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ա. Ջոհրաբյան

Անդամներ՝ ---------------------------------------- Գ. Գևորգյան

---------------------------------------- Լ. Մելիքյան

---------------------------------------- Ա. Աչոյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Մանուչարյան